Հայ գրականության օլիմպիադայի
հանրապետական փուլի հարցաշարերի
պատասխաններ
XI դասարան

1. XX դարասկիզբը հայ գրականության համար եղավ մի նոր Ոսկեդար, քանի որ այն ոչ միայն քաղաքական- սոցիալական խմորումների (ազգային կուսակցությունների աշխուժացում, ռուսական հեղափոխություն, ազգամիջյան դավադրություններ ու բախումներ, ցեղասպանություն, Հոկտեմբերյան հեղափոխություն), այլև գեղագիտական ըմբռնումների հեղափոխության ժամանակաշրջան էր։ Գեղագիտական նոր ըմբռնումների սկզբնավորողներից մեկը եղավ Վահան Տերյանը՝ աշնան ու տխրության երգիչը, նաիրյան երկրի երգիչը, գարնան ու վերադարձի երգերի փողհարը։ 1908-ին հրապարակ իջավ Տերյանի «մթնշաղի անուրջներ» ժողովածուն և«Պահ մի մոռացվեցին մեր անվանի բանաստեղծները, ամենուրեք՝ երեկույթներում,ընտանիքներում, ընկերական շրջաններում արտասանում էին Տերյանի սոնետներն ու էլեգիաները։ Սկսվել էր տերյանական շրջան, Տերյանի էպոխա։ Օդը լիքն էր Տերյանով»-, հիշում է Ստեփան Զորյանը և շարունակում.«Մեր գրականության պատմությունը չի տեսել երևի բանաստեղծական երկի այնպիսի սրտագին ընդունելություն, որի ն արժանացավ Տերյանի «Մթնշաղ անուրջներ» ժողովածուն »։ Իսկ ի՞նչ էր արել Տերյանը. նա ուղղակիորեն դիմել էր խորհրդապաշտական ուղղության սկզբնաղբյուրներին՝մտապատկերներին ու խորհրդանշաններին, որոնցով փորձում էր հաստատել խաղաղ, անրջող մայրամուտի և բանաստեղծի հոգու դաշինքը, իրիկնաժամի թավշյա նվագներից մինչև աշնան տխրություն, Հրաշքի և ճակատագրի մտերմությունից մինչև ցնորքներ ու աղոթքներ, մինչև քնքշաբույր գարնան ու վերադարձի երգեր , նա ապրեցնում էր ընթերցողին՝ տանելով «ուրիշ մի աշխարհ»։ Այդ ուրիշ աշխարհը կոչվում է տերյանական, Տերյանի աշխարհ, որ մեր առջև ուրվագծում է «սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև» մեր սրտերը իր հետ տանող կույսի կերպարը. տխրությունը դառնում է լուսավոր, քանի որ «այդ անուրջ կույսի շշուկը» մնում է որպես աղոթք, որպես որոնված կարոտ ու երգ(Տխրություն). այսպես է բացվում ժողովածուն. այնուհետև մենք այդ սերը որոնում ենք երկնքում, որտեղ մենք շղթայված ենք առհավետ՝ **Աստղերի պես և հարազատ, և օտար** :(Fatum)։ Անապական սիրո, ցնորքների , ոսկեցոլ պատրանքների փնտրտուքները բանաստեղծին տանում են երազային աշխարհ, որտեղ սիրած էակին«ոսկով չեն գնում», բայց դա ընդամենը տագնապի շեշտ է, վիատություն, որ հետո դառնում է կյանքի օրհնություն՝

Օրհնությո՛ւն և՛ քեզ, տանջանքի գիշեր,-
Ե՛վ երկունք, և՛ մահ,- փա՛ռք և օրհնությո՛ւն։

Չարենցը՝ Տերյանին։«**Սրտաբեկ, տխուր պոետ արևավոր»։ Եվ սիրեց մեր ոգին նրան,**
Պոետին այդ տխուր ու բարի։

Նա եկավ, երգեց ու գնաց դեպի հեռուներն աշխարհի,
Բայց երգը իր կառչած մնաց իր երկրի հնավանդ ծառին։

Վահան Տերյան, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո,
Թող լուռ փռվի հիմա իմ դեմ անլույս երեկո։
Սրտիս վրա իջնի մուր մի ամպի քուլա,
Քամին բերե թող մահվան բոթ ու անձրևը լա։
Եվ թող թափվեն շուրջս աշնան տերևներ դեղին
Եվ զարդարեն, Վահան Տերյան, քո անցած ուղին…..

2. Ինչ ունեցել է ժողովուրդը քո
Հնում, անցյալում- լուսավոր ու վեհ,
Ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ,
Ողջը հավաքել ու քեզ է տվել…

Այսպես է իրեն արդարորեն բնութագրել հանճարեղ Չարենցը, և սա բացարձակ ճշմարտություն է, ոչ թե ինքնագովեստ կամ ,որ ավելի անկարելի է՝մեծամտություն։ Շատ հազվադեպ բանաստեղծներ կան, որ 21 տարեկանում կարող են հռչակված լինել իրենց նախորդած հանճարների չափով, նրանք Աստծո ընտրյալներն են, որոնց թվում է նաև Եղիշե Չարենցը՝ մեծ կարսեցին, հայ գրականության Բուալոն, Հարդագողի ճամփորդը։ Չարենցը 20 տարեկան էր, երբ երկրագունդը ցնցվեց հեղափոխության ալիքից. տառապած հայ ժողովուրդը հույսով նայեց դեպի Հյուսիս՝ ակնկալելով փրկություն։ Անհանգիստ ու պրպտող Չարենցը չէր կարող մասնակիցն ու երգիչը չլինել աշխարհացունց այա իրադարձության, և նա նետվեց հեղափոխության բոցերի մեջ՝ որոշակիորեն հեռացնելով հայրենիքի կորստյան տագնապները։ «Վահագն» շրջադարձային ստեղծագործությամբ նա վերադառնում էր իրական հայրենիքի բախտին, նա ըմբոստանում էր հայրենասիրության նմանատիպ ըմբռնումների դեմ։ «Ողջակիզվող կրակ» շարքի սպասումը դառնում է իրականություն՝ արտահայտվելով «Սոմա» և« Ամբոխները խելագարված» գործերում։
Սոման հին հնդկական աստվածություն է. թարգմանաբար նշանակում է քամել. այն երջանկություն պարգևող ուժի ակունք է, բարիք, որով հարբում են բոլորը։ Սոման և Աստված է , և պաշտամունքային խմիչք։ Չարենցը հանդես է գալիս Գանգեսի քուրմի կերպարով, որն իր սերն է խոստովանում. նա արբած է Սոմայով և նրան պատկերացնում է աղջկա ու Երկնային քրոջ տեսքով։ Նախերգանքի բնույթ ունի առաջին մասը, որտեղ բանաստեղծը ներկայացնում է իր երգի առարկան, այնուհետև Սոման դառնում է Ազատության սրբազան հարս, Ազատություն, և արբեցման տարերքը երգից վերածվում է պարի, ապա կործանարար մոլուցքի և պայքարի ոգու՝իր մեջ առնելով այդ ոգու բոլոր կրողներին։ Ապա կենարար խմիչքով արբեցած ոգիները« Ամբոխները խելագարվածում» դառնում են արևի դեմ բացվող-փռվող ազատության մարտիկներ,որ «եկել ենքաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու

ու մոտ», եկել են խորտակելու հինը մարմնավորող ատելի քաղաքը: Այս պոեմը նույնպես սկսվում է հրովարտակ- կոչ- ուղերձով՝ բոլորին համախմբելու՝

Հեռո՛ւ, մոտի՛կ ընկերներներին, աշխարհներին, արևներին, հրանման հոգիներին,
Բոլոր նրանց, ում որ հոգին վառվում է վառ,բոլոր նրանց հոգիներին արևավառ,

Կյանքի ,մահի այս ամեհի աղջամուղջում ողջակիզվող հոգիներին՝ ողջո՛ւյն, ողջո՛ւյն: Պոեմում կան խորհրդանիշներ՝ իրիկունը, քաղաքը կայարանը, արևը: Այս խորհրդանիշները դառնում են պոեմի նյութը, և պոեմն ինքնին վերածվում է հերոսական ասքի, դյուցազնավեպի, որն իր մեջ ամփոփում է նոր կյանքը՝շարժման մեջ դնելով խելագարված ամբոխների հզոր երթը դեպի Արևը՝ Ազատությունը. հինը խորտակող ուժը՝ ժողովուրդը , հարբել է ազատության բերկրանքից, խելահեղ խիզախությամբ լուսադեմին գրավում են կայարանը, հնչում է նոր ժամանակի երգը, իսկ երգիչը բանաստեղծն է, որ հավատում է արդարության ուժին, երգը դառնում է հաղթանակի՝ դեպի Արևը գնացող խելահեղ գրոհող ամբոխների ուժը.

Աչքերն հառած հեռու- հեռուն կարմիր վառվող արեգակին՝
Արևավառ հեռուներում նրանք կռվում էին կրկին.
Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝
Դեպի արևն էին գնում ամբոխները խելագարված…

Այս պոեմների գրությանը նախորդել էր Սադարապատի հերոսամարտը, որը ոգեշնչել էր հանճարեղ բանաստեղծին, չնայած դրանք գրվել են Ցարիցինի խրամատում, բայց հայոց պետականության վերականգնումը խանդավառել էր բանաստեղծին: Սակայն այս խանդավառությունը տեղի է տալիս Չարենցի դառնաղի հիասթափությանը: Ստալինյան վարչակարգի պայմաններում այլախոհ Չարենցը մեծ հալածյալ էր. նրան չէին հանդուրժում ազատամիտ, ազգային գաղափարների, վեհաթռիչ մտքերի համար: Նրան ամբաստանում էին այն գաղափարների համար, որոնք հետո դառնալու էին իրենց իսկ գաղափարները: Այս պայմաններում անտանելի էր դառնում ստեղծագործելը, բացահայտվել էր «Պատգամ» բանաստեղծության հայտնի կարգախոսը՝«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Ծանր վիրահատության պատճառով նրան թմրադեղ էին հատկացրել(Աղասի Խանջյանը), անգամ դա օգտագործում էին որպես զենք՝ ամբաստանելու վերին օղակներում: Նրան հեռացրել էին գրողների միությունից, ընտանիքին արտաքսել էին Ծաղկաձորի հանգստյան տնից, կալանել էին «Գիրք ճանապարհին» և անթիվ նման բաներ, քանզի Չարենցը շատ արագ էր հասկացել ժողովուրդների հոր կործանարար գաղափարախոսությունը և ,ինչպես ազնիվ հավատացյալ, բարձրաձայնել էր «մտերիմների» շրջանակում: Նա Ստալինին անվանել էր «թիֆլիսցի նեղճակատ կինտո», « Զարհուրելի երևույթ չեղյալ՝Աշխարհում օրից առաջին», «Անծայրածիր մի ամբողջ երկիր արջի նման պարացնող ծաղրածու» և այլն: Նա հրաշալի պատկերացնում էր իր վախճանը՝ **Իմ մահվան օրը կիջնի լռություն..** . Այդպես եղավ … մինչև նրա հաղթական վերադարձը 1955-ին և հավերժորեն… Զարմացած կզգան ինձ այնքա՛ն մոտիկ Եվ հանկարծ այնքա՛ն թանկ ու հարազատ…

3. XX դարասկիզբը հայ ժողովրդի պատմության ամենաճակատագրական շրջաններից մեկն էր, եթե ոչ ամենաճակատագրականը։ Դարերով երկատվծ, մասնատված Հայաստանը բառացիորեն կանգնած էր ոչնչացման եզրին. ցարական Ռուսաստանի ուսումնական Թուրքիայի հայահալած քաղաքականությունը այլևս վտանգի տակ էր դրել Հայաստանի և հայ ժողովրդի գոյության հարցը, և հայ քաղաքական գործիչները, մտավորականությունը, ժողովրդի ազատասեր զավակները ելք էին որոնում՝ փրկելու շնչահեղձ եղող երկիրն ու ժողովրդին։ Բնականաբար գրականությունը պիտի դառնար ոչ միայն ոգեկոչող, այլև առաջնորդ, և հրապարակ իջան մեր ժողովրդի ազնվագույն զավակները՝ հիշեցնելու մեր փառավոր անցյալի հաղթանակները, ուժի և գեղեցկության փառաբանումը՝ ի հեճուկս տիրող նենգադավության, թշնամանքի, չարության։ Արևելյան հատվածում հնչում էր մեծ լոռեցու սթափեցնող կոչը, Ռաֆֆու հերոսների անօրինակ սխրանքներն էին կրկնում քաջ հայորդիները՝ զիվորագրվելով կամավորական խմբերին, արդեն թափ առած հայդուկային շարժմանը։ Ահա պատմական այս խառն իրավիճակում արևմտահայ առաջադեմ մտածողներն ու անզուգական բանաստեղծները, խաբվելով Երիտթուրքերի խոստումներից, հասկանալով մեր ժողովրդի դեմ նենգորեն լարված թակարդի անդառնալի հետևանքները, ցանկանում էին « զայրույթն ամբոխին» ուղղորդել պայքարի դաշտ, որպեսզի «Ազատության սահմանված ազգը չմնա անմրտրակ»։ Նրանք երազում էին «հեթանոս դարերի»,«Գինու նման անկեղծ և հզոր» ժամանակներն ու մարդկանց։Իրականության վատթարագույն վիճակը, հայ ժողովրդի օրհասական ապրումները՝ ասգային անկախության բացակայության ու սուլթանների և ցարերի բռնակալության պայմաններում, երբ մեղքերն ու ոճիրները գործվում են ոչ թե բացահայտ, այլ սրերը պատյանի մեջ թաքցնելով, Վարուժանը իր գաղափարակից ընկերների՝ Հակոբ Սիրունու, Վահան Թեքեյանի, Կոստան Զարյանի, Հակոբ Օշականի և այլ նվիրյալների հետ ստեղծում է «Նավասարդ» գրական-գեղարվեստական տարեգիրք՝ փորձելով վառել պայքարի կրակը՝«Ուժի՛ն համար,կրոնքի՛ն համար բազուկիդ» : Սարեգիրքը միայն մի համար ունեցավ 1914-ին, իսկ մնացյալ համարները ներկվեցին ցեղասպանության արյունով։ Այդ տարեգրքի համար Վարուժանը մի շնչով գրեց բնաբան – բանաստեղծությունը՝

Հանճա՛րդ Հայկյայ, Նավասարդյան սա տոներուն Արևափառ՝
Ալ վերածնե փլատակներեն, և փառագոչ Քնարըդ ա՛ռ։
Հանու՛ն Ույժին, հանու՛ն Գեղին, մտիր մեհյանն Աստվածներուն.
Ջահը ձեռքիդ՝բագնե բագին համասըփռե՛ Հուր ու արյուն։
Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր բաժակըդ նուռ,
Հետո զոհվող քերթողներուն սըրտին վրա Լեցու՛ր, լեցո՛ւր։
Զի մենք, հանուն Սերին,Սերմին, Քու հին Ցեղդ մարմարեն կույս,
Մե՛նք, Զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք Նո՛ր Արշալույս։

4. Այս հարցի պատասխանը գերազանցապես ինքնուրույն է, բայց ներկայացնում ենք նմուշ՝ կողմնորոշման համար։

Իմ Թումանյանը. որքանով եմ ես յուրացրել անենայն հայոց բանաստեղծի դասերը, որպեսզի իրավունք ունենամ Նրան իմը համարելու; Ես ունեմ իմ Թումանյանը՝ տարբեր տարիքներում։ Երբ ես շատ փոքր էի, մայրիկս ինձ ուղարկում էր եղինջ քաղելու և ամեն անգամ ասում էր՝ Հուռին գնաց բանջարի,

Բանջար չեղավ՝ խոտ եղավ,
Խոտի տակին ծիտ եղավ,
Ծըլվըլալեն դուրս թռավ։
Ծիտը թռավ գերանին,
Կանաչ խոտը բերանին։

Ես աղմկում էի, զայրանում, որ ինձ Հուռի էր ասում, քանի որ գիտեի, որ Հուռին մի անբան աղջիկ է եղել, ու ես նրան նմանվել չէի ուզում։ Երբ դպրոց գնացիև արդեն կարողանում էի գրել, բայց տառերս գեղեցիկ չէին ստացվում, միշտ ասում էր.

Ի՞նչ կըլինի, ասա՛, գրիչ, Ինձ էլ սիրես գոնե մի քիչ։
Ինչո՞ւ իմ մեծ քրոջ ձեռքին Գրում ես միշտ վարժ ու կարգին,
Իսկ իմ ձեռքին խազմըզում ես Սև ագռավի ճանկերի պես։
Այնքան էր մայրիկս արտասանում, որ երբ սկսեցի գեղեցիկ գրել, ես էի ուրիշներին հիշեցնում։ Հետո հանդարտ իջնում էր առաջին փյունը, և ես սովորում էի այն հրաշքը, ուր Թումանյանը ձյան փաթիլները թիթեռների հետ է համեմատում։ Հետո գալիս էր գիժ մարտը՝ հարափոփոխ ու հմայիչ, և ես սովորում էի՝ Ա՛խ, է՛սպես էլ գիժ ամիս……. և այսպես Թումանյաը դառնում էր իմ հեքիաթասաց պապիկը, իսկ եր ավելի մեծացա, կարդացի Նրա հանճարեղ պոեմներն ու բալլադները, Նա դարձավ իմ ամենամեծ Սերը, հետո իմաստնացա քառյակներով և ենտրեցի ամենասիրելին՝

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.
Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին։

Հետո ավելի հասունացա, երբ երիցս ընթերցեցի անմահական «Քաջ Նազարը»…

Հիմա արդեն ունեմ իմ անբեկանելի Սերն ու Խորհրդատուն՝ միշտ իմաստուն անմահ Արարատը մեր նոր քերթության՝ իմ Թումանյանը, ում դիմում եմ ամեն«Աստծո օր»՝ նրանից ստանալու մարդուն, կյանքին, հայրենիքին, աշխարհին վերաբերող հարցերի իմաստուն պատասխանները։

Թումանյանը գրել է գրական բոլոր ժանրերով՝ բացառյալ դրամատուրգիան, բայց, իր իսկ խոստովանությամբ, նա դրամատուրգ է ստուգապես, քանի որ նրա անգամ մանկական բանաստեղծություններում մենք տեսնում ենք դա։ Թումանյանը մշակել է ավանդազրույցներ, հղկել ու դարձրել հանճարեղ ստեղծագործություններ, որոնց

հմայքն անանց է ու անգերազանցելի։ Այդպիսիք են «Փարվանա»,«Ախթամար» լեգենդները, «Թագավորն ու չարչին» էպիկական զրույցը։ «Փարվանա» լեգենդի նյութը նա լսել է Փարվանա լիճ այցելած ժամանակ տեղի ծերերից։ Այնքան է հիացել ժողովրդական այդ զրույցով, որ այն մշակել ու դարձրել է հիասքանչ մի բալլադ՝ անձնազոհ ոգու և հավերժական սիրո մասին։ Բարձրագահ Աբուլն ու Մթին սարերի գրկում է Փարվանա չքնաղ ամրոցը՝ իր չքնաղ արքայադուստրով։ Մոտեցել է աղջկա հարսնանալու պահը, ր Փարվանա արքայի կոչ ու կանչով կտրիճներ են խռնվել ամրոցի բակում. հայտնվում է գեղեցկուհի արքայադուստրը և՝

Հառաչում է ողջ աշխարհքը, կտրիճները քարացած
Երազների մեջ են ընկնում՝ էս աշխարհքից վերացած։

Սակայն խելացի արքայադստերը չեն հրապուրում ո՛չ քաջությունը(Գուցե հայրիկ, տկար լավին հաղթի մի վես տմարդի), ո՛չ հարստությունը. նա երազում է այն քաջին, ով կբերի անշեջ հուրը՝ հավերժական սերը՝ «Ով կբերի անշեջ հուրը, նա է ընտրած իմ փեսան»։ Աշխարհի չորս ծագերում կտրիճները որոնում են անշեջ հուրը. տարիներ են անցնում, նրանք չեն վերադառնում, իսկ աղջկա արցունքներից ծնվում է Փարվանա լիճը, ծածկում քաղաք ու ամրոց; Բայց անշեջ հուր որոնող կտրիճները դեռ փնտրում են, նրանք թիթեռներ են դարձել(ի դեպ փարվանան այդպես էլ թարգմանվում է պարսկերենից՝թիթեռ) և կրակ տեսնելիս« Մեջն են ընկնում անհամբեր. Ջանք է անում ամեն մինը, Շուտով տանի, տիրանա»։ Հավերժական սիրո որոնումները շարունակվում են մինչ օրս, իսկ այս կախարդիչ զրույցը մեզ միշտ հիշեցնում է մաքուր ու անապական սիրո«բացակայությունը»։
Նույն գեղեցիկ սիրո պատմություն է նաև «Ախթամարը», որի հանճարի գրչի տակ մի ուրիշ հնչեղություն է ստացել։ Այստեղ խոսվում է ոչ միայն գեղեցիկ սիրո, այլև մարդկային այպանելի երևույթի՝ չարության մասին։ Գյուղի տղաները չեն հանդուրժում իրենց գեղեցկուհու և օտար տղայի սերը. նրանց զայրացնում է իրենց անտեսված լինելը և չարակամությամբ հանգցնում են սիրահար տղային աթ հանող կրակը. մոլորվում է առնացի երիտասարդը. առավոտյան ծովն ափ է նետում նրան՝ շրթունքներին սառած երկու բառ՝ «Ա՜խ, Թամար»։ Այդ օրվանից կղզին կոչվում է Ախթամար, իսկ Թամարը, երևի այլևս չի կարող ազատվել չունեցած մեղքի սգացումից։ Այստեղ էլ փառաբանվում է մաքուր, անկաշառ սերը, և դարձյալ մենք բախվում ենք կոպիտ իրականությանը, որտեղ«Մաքուր սերը երազ է միայն»։

Վերլուծությունը կարող եք կատարել՝ ըստ նախասիրության և նյութի իմացության։

Հայ գրականության օլիմպիադայի
հանրապետական փուլի հարցաշարերի
պատասխանների գնահատման չափանիշներ
XI դասարան

1. հարց՝ Ենթահարցեր՝ 1 – 0,5 մ., 2 – 3,5 մ., 3 – 1 մ.
2. հարց՝ Ենթահարցեր՝ 1 – 1 մ., 2 – 3 մ., 3 – 1 մ.
3. հարց՝ Ենթահարցեր՝ 1 – 0,5 մ., 2 – 0.5 մ., 3 – 0,5 մ., 4 – 0,5 մ., 5 – 3 մ.
4. հարց՝ Ենթահարցեր՝ 1 - 2 մ., 2 – 3 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան